ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ,,Գոթական և ռոմանական ոճերը Գերմանիայի և Ֆրանսիայի ճարտարապետության մեջ..

Հեղինակ՝ Ելենա Սպարտակի Եսայան

Ղեկավար՝ Լիլիթ Իսկոյան /մանկ. գիտ թեկ., դոցենտ/

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....3

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃ. ՖՐԱՆՍԻԱ.....5

ԿԼՅՈՒՆԻԻ ԵԿԵՂԵՑԻՆ..... 7

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ.....8

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃ. ԳԵՐՄԱՆԻԱ.....9

ԳԵՐՆՐՈԴԵԻ ՄԵՆԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ.....10

ԳՈԹԱԿԱՆ ՈՃԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....11

ԳՈԹԱԿԱՆ ՈՃ. ՖՐԱՆՍԻԱ.....13

ՓԱՐԻԶԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐԸ.....14

ԼԱՆԻ ՏԱՃԱՐԸ.....16

ԳՈԹԱԿԱՆ ՈՃ. ԳԵՐՄԱՆԻԱ.....17

ՔՅՈԼՆԻ ՏԱՃԱՐԸ.....18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

‹‹Ռոմանական ոճ›› տերմինը առաջացել է 19-րդ դարում, երբ կարիք եղավ որոշ ճշգրտումներ մտցնել միջնադարյան արվեստի պատմության մեջ: Մինչ այդ այն ամբողջապես անվանվում էր ‹‹Գոթական››: Այդ տերմինը գիտության մեջ ներմուծել է հնագետ Մ. դը Ժերվիլը 1818 թ.-ին:

Տարբեր երկրներում ռոմանական արվեստը տարբեր ժամանակագրություն է ընդգրկում: Օրինակ Ֆրանսիայի հյուսիս-արևելքում 12-րդ դարի վերջին քառորդը արդեն գոթական շրջանին էր վերաբերում, իսկ Գերմանիայում և Իտալիայում ռոմանական շրջանին բնութագրական նշանները շարունակում են իշխել մինչ 13-րդ դարը:

Ռոմանական արվեստում առաջատար տեղ էր զբաղեցնում ճարտարապետությունը: Կառուցվում էին հատկապես տաճարներ, մենաստաններ և ամրոցներ: Գլխավոր պատվիրատուները վանքային միաբանություններն էին, իսկ կառուցողները՝ վանականները: Աշխարհիկ ճարտարապետությունը, որոշ բացառություններով, լայն տարածում չի ունենում: Ռոմանական շրջանում տաճարները հիմնականում կառուցվում էին բազիլիկալ ֆորմայով: Ռոմանական բազիլիկան եռանավ է կամ հնգանավ, ունի տրանսեպտ և դուրս երկարող աբսիդ:

Գոթական արվեստը միջնադարյան արվեստի ոճ էր, որը զարգացավ հյուսիսային Ֆրանսիայում 12-րդ դարում՝ գոթական ճարտարապետության զարգացման գլխավորությամբ: Այն բնութագրվում էր որպես արվեստ, որը զարգացավ ռոմանականից և շարունակվեց մինչև 16-րդ դարի վերջ Եվրոպայի որոշ տարածքներում:

‹‹Գոթական›› տերմինը ստեղծվել է իտալացի Վերածննդի դարաշրջանի գրողների կողմից, որոնք գյուտը վերագրում են բարբարոս գոթական ցեղերին, որոնք ոչնչացրել էին հռոմեական կայսրությունը և դրա դասական մշակույթը: Գոթական արվեստում բացի պաշտամունքային կառույցներից զարգանում է նաև աշխարհիկ ճարտարապետությունը: Այն դառնում է բազմազան իր նշանակությամբ և հարուստ՝ իր ֆորմաներով: Սակայն գոթական ոճը իր դասական արտահայտությունը ստացավ եկեղեցական ճարտարապետության մեջ:

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

11-րդ դարի սկզբում Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի ժողովուրդների մեծ մասի մոտ ֆեոդալական հասարակարգը վերջնականապես դարձավ իշխող Արևմտյան Եվրոպայի մշակույթում: Զարգացած ֆեոդալիզմի շրջանում կտրուկ առանձնանում է երկու էտապ, առաջինը՝ 11-ից 12-րդ , երկրորդը՝ 13-ից 14-րդ դարեր:

Այդ շրջանում թագավորական իշխանությունը սկզբնապես թույլ էր, թագավորը ավելի շուտ դեկորատիվ ֆիգուր էր, որն ավարտում էր վասալների և սենյորների ստորակարգ բուրգը: Սակայն 11-րդ դարի վերջում, հատկապես Ֆրանսիայում, թագավորական իշխանությունը սկսում է ամրացնել իր հեղինակությունը և ստեղծել կենտրոնական ֆեոդալական պետություն:

Զարգացման այս էտապում գլխավոր գաղափարական ուժը կաթոլիկ եկեղեցին էր, որը խոշոր ֆեոդալական իշխանություն էր:

11-12-րդ դդ մշակույթը ամբողջապես պատկանում էր հավատքին:

Վերոնշյալ ժամանակահատվածում ռոմանական ոճով բավականին շատ ամրոցներ են կառուցվել, բայց եկեղեցիները թվաքանակով գերազանցում էին: Ամենանշանակալիցը հանդիսանում են եկեղեցի-աբբայությունները, որոնց որոշ մասը մինչև հիմա կանգուն են և գործող: Իր մեջ ամփոփելով հռոմեական և բյուզանդական շինությունների և տեղի ճարտարապետության լուծումներ, ռոմանական ճարտարապետությունը հայտնի է իր զանգվածեղությամբ, շրջանաձև կամարներով, հաստ պատերով, ամուր սյուներով, բարձր աշտարակներով և դեկորատիվ կամարաղեղներով: Ամեն մի շինություն ունի շատ ճշգրիտ կառուցվածք, և նրանք մեծ մասամբ կանոնավոր են, սիմետրիկ նախագծային հատակագծով, այնպես որ շինությունների ներքին տեսքը բավականին պարզ է ստացվում համեմատած գոթական շինությունների հետ:

Ռոմանական ոճի կառույցները հիանալի ներդաշնակված են բնությանը: Դրանց արտաքին տեսքը հանգիստ է, հանդիսավոր-խստաշունչ: Այդ տպավորությունն ստեղծվել է զանգվածեղ պատերի շնորհիվ, որոնց հաստությունը ընդգծվել է պատուհանների նեղ բացվածքների և աստիճանաձև խորացող շքամուտքերի, ինչպես և աշտարակների միջոցով, որոնք ռոմանական ոճում դարձել են ճարտարապետական կոմպոզիցիայի կարևորագույն տարրերից: Ռոմանական կառույցը պարզ ծավալների (խորանարդ, զուգահեռանիստ, պրիզմա, գլան) համակարգ է, որի ճակատային գեղազարդումներն ունեն ճարտ. ձևեր՝ կամարակապ սյունաշար, դուրս երկարող շքամուտք, խորշերի շարք և ընդհանուր հորինվածքին

ենթարկվող քանդակներ, որոնք ռիթմավորելով պատի զանգվածը, չեն խաթարում կառույցի միակուռ ամբողջությունը:

Ռոմանական բազիլիկներին հատուկ են հետևյալ առանձնահատկությունները. աստիճանաբար դուրս երկարող աբսիդներ, ճառագայթաձև դասավորված աբսիդներ, երկու տրանսեպտ և երկու՝ արևելյան ու արևմտյան աբսիդ, եռաբսիդ վերջավորություն՝ երկարած արևմտյան թևով, որը համարվում է հայկ. տիպի եռաբսիդ [հայազն Սոֆրոնիոսի VI դար հիմնադրած Թեոդոս վանքի եռանավ եկեղեցու (Երուսաղեմ) օրինակով] ևն: Տրանսեպտի և երկայնական նավերի հատման տեղում սովորաբար կանգնեցվել է երդիկ կամ աշտարակ: Տաճարի գլխավոր մասերից յուրաքանչյուրը արտաքուստ և ներքուստ հտակ առանձնացված առանձին տարածական բջիջ է: Միմյանցից բավական հեռու, թաղակիր կամարների, նավերը միմյանցից անջատող կամարաշարերի համաչափ, ռիթմիկ հերթագայումը աստվածային աշխարհաշինության անխախտության զգացողություն է առաջացրել: Այդ տպավորությունը ուժեղացվել է թաղերով (առավելաբար գլանային, խաչային), որոնք ռոմանական ոճում փոխարինել են փայտե հարթ ծածկերին:

Տարածաշրջանային առանձնահատկություններով և օգտագործվող շինանյութերի զանազանություններով հանդերձ՝ այս ոճը բավականին մեծ կիրառություն է գտել ամբողջ Եվրոպայում:

Ճարտարապետության հետ համատեղ զարգացում են ապրում նաև մոնումենտալ նկարչությունը և մոնումենտալ քանդակը: Վաղ շրջանում գերիշխում էր որմնանկարչությունը: 11-րդ դարի վերջում և 12-րդ դարի սկզբին առաջատար տեղ է զբաղեցնում տաճարների շքամուտքի զարդարումը, ինչպես նաև ճակատային պատը: Ավելի ուշ շրջանում հարթաքանդակին փոխարինել է բարձրաքանդակը: Կերպարվեստում կենտրոնական տեղ էին զբաղեցնում Աստծո հզորությունը ներկայացնող պատկերներ /‹‹Ահեղ Դատաստանը/››:

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃ

ՖՐԱՆՍԻԱ

Ռոմանական արվեստը Ֆրանսիայում ընդգրկում է 11-12-րդ դարերը: 843-ին Կարոլինգների կայսրության բաժանման հետևանքով առանձնացավ Արևմտաֆրանկական թագավորությունը; Այդ շրջանից էլ Ֆրանսիան գոյություն ունի որպես ինքնուրույն պետություն: 10-րդ դարից երկիրը կոչվեց Ֆրանսիա:

Ֆրանսիան ֆեոդալական երկիր էր: Նրան էր պատկանում արևմտաեվրոպական մշակույթի միջնադարյան պատմության առաջատար դերը: Ֆեոդալական Ֆրանսիայի տարբեր շրջանները և՝ տնտեսական , և՝ քաղաքական առումով միմյանց հետ քիչ էին կապված: Բնական է, որ թագավորական իշխանության հեղինակությունը սկզբնապես մեծ չէր:

Ֆրանսիայի կյանքում հատուկ դեր ուներ կաթոլիկ եկեղեցին, որը 11-12-րդ դդ, ինչպես և առաջ, ֆեոդալական կառուցվածքի համար գլխավոր գաղափարական հենարանն էր, ինչպես նաև կրթության և գիտության պահապանը: Հետաքրքրական էր նաև, որ թագավորի շրջապատում կային նաև եկեղեցականներ, օրինակ աբբա/ կաթոլիկ վանքի վանահայր/ Սուգերին, ով մի շարք մենաստանների կառուցողն էր և Լյուդովիկոս 6-րդի և Լյուդովիկոս 7-րդի մտերիմ խորհրդատուն: Բնական է, որ 11-12-րդ դդ մշակույթը և արվեստը, մասնավորապես ճարտարապետությունը, քանդակը և գեղանկարչությունը գտնվում էին մենաստանների ազդեցության տակ: Մի շարք դեպքերում մենաստանները և քաղաքները տարածքներով կապված էին միմյանց հետ: Հաճախ քաղաքները կառուցվում էին հնագույն մենաստանի կողքին, կամ մենաստաններն էին կառուցվում արդեն հզորացած քաղաքներում:

Ռոմանական Ճարտարապետության վաղ ֆորմաների զարգացումը վերաբերում է 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի սկզբին: 11-րդ դարի ընթացքում ռոմանական ճարտարապետության մեջ կոնկրետանում են հիմնական դպրոցները և ուղղությունները: Ճարտարապետական համակարգը պայմանականորեն կարելի է միավորել 3 մեծ խմբի մեջ.

1. Տաճար՝ գմբեթային ծածկով
2. Սրահային եկեղեցի
3. Բազիլիկային եկեղեցի, որի գլխավոր նավը բարձր է կողմնային նավերից:

Ֆրանսիական ռոմանական ճարտարապետությունը աչքի է ընկնում տեղական դպրոցների ծայր աստիճան բազմազանությամբ, հորինվածքների յուրահատուկ մոնումենտալության է ձգտել բուրգունդյան դպրոցը (Կլյունիի, այսպես կոչված, 3-րդ եկեղեցին, 1088—XII դ.), քանդակային հարդարանքի հարստությամբ՝ Պուատուի դպրոցը (Պուատիեի Նոտր Դամ եկեղեցին, XII դար). Պրովանսում եկեղեցիների

բնորոշ առանձնահատկությունը ճոխ քանդակազարդված գլխ. շքամուտքն է (Առլի Սեն Տրոֆիմ եկեղեցի, VIII—XV դարեր): Խստաշունչ հարդարանքով նորմանդական եկեղեցիները շատ բանով նախապատրաստել են գոթական (Կանի Լա Տրինիտե եկեղեցին, 1059—66): Աշխարհիկ ճարտարապետության մեջ կազմավորվել է դոնժոնով դղյակ-ամրոցի տիպը: Ֆրանսիայի ռոման, կերպարվեստի բարձունքներից են բուրգունդյան և լանգեդոկյան եկեղեցիների բարավորների քանդակագործությունը (Վեզլեում, Օտենում, Մուասսակում), բազմաթիվ որմնանկարաշարերը, մանրանկարչության և դեկորատիվ-կիրառական արվեստի հուշարձանները:

ԿԼՅՈՒՆԻԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Բուրգանդիայում և հյուսիսում կառուցվում էին գլխավորապես բազիլիկ կառույցներ բարձր կենտրոնական նավով: Կլյունիում մշակում են բազիլիկի այն տեսակը, որն ամենալավն էր համապատասխանում կաթոլիկ զանգվածին: Նախկին 2 բազիլիկների տեղում այստեղ 1088 թ-ին սկսվում է կառուցվել 3-րդ եկեղցին/այսպես կոչված Կլյունի 3/, որն ավարտվեց 1107թ-ին: Դա հնգանավ բազիլիկ էր, երկու տրանսեպտներով, արն արևելյան կողմից լայնացվել է կրկնակի մատուռներով: Այն բանից հետո, երբ 1220 թվականին արևմտյան կողմից կառուցվեց ցածր եռանավ կառույց, Կլյունիի եկեղեցին իր երկարությամբ գրեթե հավասար դարձավ Հռոմի Սուրբ Պետրոսի բազիլիկին: Այստեղ կառուցողները որոշում են մեծացնել կենտրոնական նավի բարձրությունը և լայնությունը ու նրա պատերի մեջ պատուհաններ են բացում: Դա բավականին խիզախ քայլ էր, քանի որ ռոմանական կառուցողական համակարգում ծածկի ծանրությունը հավասարապես տանում էր ամբողջ պատը: 1807 թվականին Կլյունիի եկեղեցին ավերվում է և պահպանվում է միայն հարավայինի մի մասը;

ԿԱՆԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ռոմանական տաճարների զարգացման մյուս էտապը ներկայացված էր Կանում գտնվող տղամարդկանց և կանանց մենաստանների եկեղեցիներում: Գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում կանանց մենաստանի Երրորդություն եկեղեցին /1059-1066/, վերակառուցվել է 1120-1140 թթ.: Այն եռանավ բազիլիկ է : Համեմատաբար նեղ կողային նավերը, որոնց բարձրությունը գրեթե կենտրոնական նավի կեսն է կազմում, ծածկված են ցածր խաչաձև թաղերով: Կենտրոնական և կողային նավերին կապում է կամարային թռիչքի կիսակլորը: Եկեղեցին թողնում է հանգիստ, մասամբ ծանր տպավորություն: Կենտրոնական նավը երկու անգամ բարձր է կողայիններից: Որմնահեցերը բաժանում են ֆասադը գրեթե նույնաչափ երեք մասի, որտեղ տեղավորված են կենտրոնական և կողային մուտքերը: Կենտրոնական մուտքի կամարային պորտալը երկու անգամ լայն է կողային պորտալներից: Կենտրոնական մուտքը բաղկացած է երկու դռներից, որոնք բաժանված են սյունով: Ֆասադի երկրորդ հարկը, կենտրոնական դռների վերևում, երեք բարձր պատուհան ունի, կողայինները ունեն մեկական փոքր պատուհան: Երրորդ հարկն ունի երկու պատուհան, իսկ կողայիններում պատուհանների տեղերում դեկորատիվ կամարներ են: Հատկապես արտահայտիչ ենաշտարակները, որոնք կարծես պահպանում են տաճարի մուտքը:

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃ

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիայի միջնադարյան մշակույթը աչքի է ընկնում տեղի դպրոցների բազմազանությամբ: 10-11-րդ դարերի գերմանական արվեստը պատմության մեջ երբեմն անվանում են օտտոնյան: Սակայն ոճի առումով օտտոնյան շրջանի հուշարձանները պատկանում են ռոմանական արվեստի վաղ շրջանին:

Գերմանիայում կառուցում են ռոմանական ոճի բազմաթիվ ճարտարապետական կառույցներ, սակայն բազմաթիվ վերակառուցումների շնորհիվ սկզբնական տեսքով շատ քիչ կառույցներ են մեզ հասել: Գերմանական ճարտարապետության տարբեր դպրոցների մեջ առավել նշանակություն են ունեցել երեքը՝ սակսոնյան, վեստֆալյան և ռեյնսկյան:

Սակսոնյան դպրոցի կառույցներում գերիշխում է հարթ ծածկով բազիլիկի տեսակը: Սակսոնյան ճարտարապետության այդ շրջանի մի շարք կառույցների անմիջական նախատիպը հանդիսացավ Կլյունիի մենաստանային երկրորդ եկեղեցին /981թ. /, որը նույնպես ուներ բազիլիկ ֆորմա և ծածկված էր հարթ փայտե ծածկով: Սակսոնյան եկեղեցիներում կապը վաղ քրիստոնեական կառույցների հետ արտահայտվել է եռանավ կառույցների երկայնական իրանի պահպանման մեջ, որտեղ մեջտեղինը, ինչպես և ընդունված էր բազիլիկում, բարձր էր կողայիններից և ուներ մի շարք պատուհաններ: Սակայն սակսոնյան ճարտարապետության մեջ կային նաև նորարարություններ: Այստեղ կար երկու դաս՝ երգչախմբի տեղ, որը սովորաբար ավագ սեղանի և կենտրոնի միջև էր, երկու տրանսեպտ և հետևաբար երկու խաչի հատման տեղ: Յուրաքանչյուր դասը և ՝ արևմտյան,
և ՝ արևելյան, ուներ երկու հզոր աշտարակ, որոնք գտնվում էին գլխավոր նավի և տրանսեպտների հատման տեղում: Թեպետ նման հատակագծումը արդեն եղել էր կարոլինգյան շրջանում, այն լայն տարածում գտավ հենց ռոմանական Գերմանիայում:

ԳԵՐՆՐՈԴԵԻ ՄԵՆԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Սակսոնյան դպրոցի հուշարձան է Գերնրոդեի մենաստանի եկեղեցին /960 թ./ , որը վառ պատկերացում է տալիս վաղ ռոմանական շրջանի գերմանական ճարտարապետության մասին: Այստեղ աչքի են ընկնում ճարտարապետական ծավալների հասարակ, երկրաչափական ֆորմաները, բավականին զուսպ ճարտարապետական դեկորը, բարձր տեղավորված պատուհանները, որոնք ընդգծում են պատի համր հարթությունը, ինչը կառույցին տալիս է ամրոցային տպավորություն: Եկեղեցու ինտերիերը նույնպես առանձնանում է պարզությամբ:

Հզոր և հարուստ կայսերական քաղաքներ Որմսում, Շպայերում և Մայնցում ստեղծվում են ռոմանական ճարտարապետության հիանալի հուշարձաններ: Այս բոլոր կառույցները սկսվել են 11-րդ դարում և միայն 12-ից 13-րդ դարում են ծածկվել թաղերով:

Ռեյնի դպրոցի կոնստրուկտիվ առանձնահատկությունը միացված ռոմանական սիստեմի ծածկերն էին: Դա կայանում է նրանում, որ կենտրոնական նավի թաղերի անկյունային պահանգները /գերան/ իրենց վրա են կրում անկյունային նավերի թաղերը: Ռեյնսկյան դպրոցի եկեղեցիների բոլոր երեք նավերն էլ ծածկված են խաչաձև թաղերով: Ռեյնի տաճարներն ունեին զույգ աշտարակներ, որոնք ընդգծում էին կառույցի արևմտյան և արևելյան կողմերը: Ռեյնսկյան դպրոցի եկեղեցիներում ընդունված էր միայն զուսպ ճարտարապետական դեկորը: Բնութագրական է դեկորատիվ կամարների կիրառումը էքստերիերում:

Շպայեի և Որմսի եկեղեցիներում տրանսեպտը տեղավորված էր արևելյան աբսիդի անմիջապես դիմաց և երկայնական կառույցի ուրվագծից չնչին մասն է դուրս գալիս, իսկ մայնցի եկեղեցում տրանսեպտը ոչ թե եկեղեցու արևելյան , այլ արևմտյան կողմում էր: Որմսի և Մայնցի եկեղեցիները ունեն հստակ արտահայտված արևմտյան և քիչ ընդգծված արևելյան աբսիդներ:

ԳՈԹԱԿԱՆ ՈՃԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գոթիկան , ինչպես և ռոմանական ոճը, տարածվել և զարգացել է կաթոլիկ դավանանքի երկրներում և նրա հովանու տակ: Գոթական արվեստում առավել տիպիկ էին քաղաքային տաճարները: Նրա վիթխարի չափերը, կոնստրուկտիվ կատարելությունը, քանդակային զարդարանքը ոչ միայն հավատքի մեծության հաստատման մասին էր վկայում, այլ նաև հանդիսանում էր քաղաքացիների հարստության և հզորության սիմվոլ: Գոթական շրջանում փոխվում են նաև կառուցողները: Կառուցում էր արհեստավոր ժողովուրդը: Այստեղ արհեստը սովորաբար ժառանգաբար էր անցնում: Յուրաքանչյուր արհեստավոր աշխատում էր իր քաղաքում: Քարագործների արհեստանոցները աշխատում էին այնտեղ, որտեղ մեծ կառուցողական աշխատանքներ էին կատարվում: Այդ իսկ պատճառով նրանք տեղափոխվում էին քաղաքից քաղաք և նույնիսկ երկրից երկիր: Այդ է պատճառը, որ գոթական արվեստում տեղի դպրոցները իրարից շատ չեն տարբերվում, ինչը կա ռոմանական արվեստում: Երբեմն համարում են, որ սլաքաձև կամարը գոթական արվեստը առանձնացնող նշան է: Դա ճիշտ չէ: Սլաքաձև կամարը հանդիպում է արդեն ռոմանական արվեստում: Ուղղակի գոթական արվեստում այն ավելիլայն կիրառում է ստանում: Գոթական ճարտարապետության գլխավոր նորարարությունը կարկասային սիստեմն է: Դրա օգնությամբ պատը, որպես կառույցի կոնստրուկտիվ մաս,11դարձավ ավելորդ: Այն կամ դարձավ թեթև միջնապատ, կամ լցվեց վիթխարի պատերով: Հնարավոր դարձավ բավականին բարձր կառույցներ կառուցել: Կառուցողական նյութը տեղի լեռնային քարն էր:

Գոթական տաճարները կառուցվում էին քաղաքացիների միջոցով և հանդիսանում էին տեղի հավաքույթների վայր: Այդպես բարձրանում էր քաղաքացիների և նվազում հոգևորական դասի նշանակությունը: Փոխվում է նաև գոթական տաճարների արտաքին տեսքը: Ռոմանական եկեղեցիներին հատուկ աշտարակները, որոնք սովորաբար խաչի հատման մասում էին, անհետանում են: Սակայն արևմտյան ֆասադի հզոր և վեհաշուք աշտարակները, զարդարվում էին հարուստ քանդակներով:

Փոփոխություն է կրում նաև զարդանախշը: Երկրաչափական ֆորմաներին գալիս են փոխարինելու տեղի բնության նմուշները, օրինակ՝ բաղեղի, կաղնու, հաճարենու, հացենու տերևները:

Խուլ պատերի փոխարինումը պատուհաններով գրեթե վերացնում է որմնանկարչության առկայությունը: Որմնանկարը փոխարինվում է վիտրաժով: Սակայն կերպարվեստի հիմնական տեսակը քանդակն էր: Ռոմանականի սյունանման

քարացած, ինքնամփոփ արձաններին փոխարինեցին սյուժետային, հուզական կերպարներով հարուստ պատկերաքանդակները:

Իր դիրքերը չի զիջում քանդակը: Արևմտյան ֆասադի կենտրոնական պորտալը, որպես կանոն նվիրվում էր Քրիստոսին, երբեմն Տիրամորը: Աջ պորտալը Տիրամորը, ձախը սրբին, որին տվյալ վայրում հատկապես պաշտում էին: Դռների միջին սյունը հիմնականում Քրիստոսի, Մարիամի կամ սրբի արձանն է: Տիմպանի տարածքը հիմնականում ,,Ահեղ դատաստանի,, տեսարանն է:

ԳՈԹԱԿԱՆ ՈՃ

ՖՐԱՆՍԻԱ

Գոթական արվեստի ձևավորման գործում մեծ դեր խաղացին հյուսիս-արևելյան Ֆրանսիայի շրջանները՝ Իլ դե Ֆրանսը և Շամպանը, հետագայում նաև Փարիզը: 19-20-րդ դարի մի քանի բուրժուական գիտնականներ փորձեր արեցին ապացուցել, որ գոթականը ֆրանսիական ծագում չունի: Սակայն 13-րդ դարում ոչ ոք չէր կասկածում, որ գոթական սիստեմը մշակվել է Ֆրանսիայում և անվանել են այն ,,կառուցում՝ ֆրանսիական մաներայով,,:

12-րդ դարի վերջին միջնադարյան Ֆրանսիայի արվեստը իր ծաղկման շրջանին է հասնում: Ֆրանսիայի արվեստում գոթական շրջանին անցումը մեծապես կապված էր արտադրողական ուժի աճի հետ, հողագործության կատարելագործման և հատկապես քաղաքների աճի հետ: Ամրանում է նաև թագավորական իշխանությունը: Ստեղծվում է միասնական, ֆեոդալական պետություն: Առաջանում է ֆրանսիական ազգը, ձևավորվում է նրա մշակույթը:

12-13-րդ դդ Ֆրանսիայում այնպիսի կառուցողական աշխատանքներ ծավալվում, ինչպիսին Ֆրանսիան դեռևս չէր տեսել:

Ճարտարապետական կառուցվածքային հիմնական առանձնահատկությունը սլաքաձև կամարի, խաչաձևող կամարներով և ջլաղեղներով խաչային թաղի բանական համադրումն էր, որի շնորհիվ հնարավոր եղավ վերացնել կրող պատը, հաստատել քարի հիմնակմախքային տեկտոնիկ կամարջղային թաղը:

Կամարաջղերը, որպես կարկասային սիստեմի հիմք, առաջին անգամ կիրառվել են Փարիզի մոտ Սեն Դենիի աբբայության եկեղեցում: Ենթադրվում է, որ հին եկեղեցիների վերակառուցման և նորացման համար աբբա Սուգերին հրավիրել է հարավային Ֆրանսիայի վարպետ-քարագործների: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Սուգերիի գիրքը, որը մանրամասնորեն նկարագրում է Սեն Դենիի կառուցման պատմությունը 1137-1150թթ.: Սկզբում վերակառուցվում է ֆասադը և կառույցի ամբողջ արևմտյան մասը: Պահպանվել է ռոմանական ճարտարապետության կողմից մշակված երկաշտարակությունը, իսկ աշտարակները կառուցվել են ավելի ուշ՝ 1151 թ-ին:

ՓԱՐԻԶԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐԸ

Ֆրանսիական վաղ գոթական շրջանի ամենագեղեցիկ կառույցներից մեկն է Փարիզի Աստվածամոր տաճարը: Այն սկսվեց կառուցվել 1163 թ-ին: Կառուցումը սկսվեց դասից, որն ավարտվեց 1182 թ-ին: Գլխավոր կմախքը ավարտվել է 1196թ-ին, արևմտյան ֆասադը իր մուտքերով հիմնականում 1208 թ.:

Առանձին մասերում տաճարը կառուցվեց մինչև 13-րդ դարի կեսերը: Հնարավոր է, որ ավելացումների ճարտարապետը եղել է Ժան դե Շելը:

Փարիզի Աստվածամոր տաճարը հնգանավ կառույց է: Դասն ունի երկուական աբսիդ: Տաճարը կառուցվել է մեկ դարից ավել, սակայն այն զարմացնում է իր ճարտարապետական կերպարի ամբողջականությամբ: Ամբողջ կոմպոզիցիայում առաջատար տեղը պատկանում է արևմտյան գլխավոր ֆասադին: Ֆասադը դեպի վեր ձգված երկու հզոր աշտարակներով, բաժանված է երեք հարկաբաժնի: Առաջին հարկն ունի երեք խորը սլաքաձև կամար: Կամարների վերևում թագավորների ֆրիզաձև քանդակներն են: Նմանատիպ շարքով է սկսվում երկրորդ հարկաբաժինը, սակայն ավելի փոքր ֆիգուրներով: Երկրորդ հարկաբաժնի կենտրոնում վարդակաձև մեծ կլոր պատուհան է: Կողային մուտքերի վերևում մեծ պատուհաններ են՝ ընդգրկված սլաքաձև կամարի մեջ: Պատուհանների վերնամասում փոքր վարդակներ են: Երրորդ հարկաբաժինը կազմված է բարձր և թեթև սրահից, որն իր հերթին կազմված է նրբակազմ սյուների վրա միահյուսված սլաքաձև կամարներից:

Տաճարի ֆասադը և աշտարակները ստեղծում են հարմոնիկ համալիր՝ ներգծված բարձր ուղղանկյան մեջ: Տաճարի ֆասադը թողնում է դեպի վեր ձգվածության տպավորություն: Դրա հետ մեկտեղ յուրաքնչյուր հարկաբաժինը առանձին վերցրած ձգված հորիզոնական:

Տրանսեպտների ֆասադները զարգացած գոթիկայի ստեղծագործություններ են: Նրա ավելի նրբագեղ ֆորմաները՝ հարթ պատի գրեթե լիակատար բացակայությունը և վիթխարի թափանցիկ վարդակը լրացնում և հարստացնում են գլխավոր ֆասադի արտահայտչականությունը: Կենտրոնական նավի հսկայական ներքին տարածությունը/ թաղի ներքևի բարձրությունը 35 մ/ կտրուկ իշխում է քիչ լուսավորված և ցածր կողային նավերի վրա: Ինտերիերը, ինչպես և ֆասադը, լի է հանդիսավորությամբ և խստությամբ Կենտրոնական նավի ներքին պատերը նույնպես բաժանված են երեք մասի; Ներքևինը կազմված է ծանր և կարճ սյուներից, որոնց վրա հենվում են կամարները, դրանք էլ բաժանում են կենտրոնական նավը կողայիններից: Երկրորդ մասը նույնպես կամարաշար է, որոնք իր հերթին բաժանված են երեք կամարիկների: Երրորդ շարքում սլաքաձև պատուհաններ են՝ գունավոր վիտրաժներով: Ներքևից վերև յուրաքանչյուր շարքով ավելի թեթև ու ձգված է

դառնում: Կենտրոնական նավի խորքում, գտնվում է խորանը, որը լի է վիտրաժներով:

Ֆասադի ձևավորում գործում, մեծ դեր է խաղում քանդակը: Բացառապես լայն կիրավել է դեկորատիվ փորագրությունը: Այդ զարդանախշերը կամ բուսական , կամ երկրաչափական են կամ էլ ֆանտաստիկ պատկերների տեսք ունեն:

Տաճարի ինտերիերը քանդակային զարդարանքով ավելի զուսպ է, աչքի են ընկնում խոյակների փորագրությունը: Կենտրոնական աբսիդում կան 14-րդ դարի ռելիեֆներ: Գոթական շրջանում տաճարներում քանդակին գալիս է փախարինելու վիտրաժը:

2019 թվականի ապրիլի 15-ին տաճարը հրդեհվել է[6]: Այն կրել է մեծ վնասներ այդ թվում քանդվել է սրածայր գմբեթը և վնասվել տանիքի 2/3-ը: Ըստ նախնական վարկածի՝ հրդեհի պատճառը տաճարում ընթացող վերականգնողական աշխատանքներն են

ԼԱՆԻ ՏԱՃԱՐԸ

Գոթիկայի մյուս հիանալի հուշարձաններից է Լանի տաճարը: Լանում առաջին քարակերտ եկեղեցին կառուցվել է եպիսկոպոս Գերֆրիդի ջանքերով 774-779: Եկեղեցին նվիրված է եղել Քրիստոսին և Աստվածամորը: Օծվել է 800 թվականին Կառլոս Մեծի ներկայությամբ: 250 տարի անց եկեղեցին վերակառուցել են ռոմանական ոճով տեղի եպիսկոպոս Էլինանդի (1052-1095) հովանավորությամբ[3]: 1071 թվականին այդ եկեղեցում թագադրվել է Ֆիլիպ 1-ին Ֆրանսիացին: 1112 թվականին՝ ժողովրդական ապստամբությունների ժամանակ եկեղեցին վառվել է. երկու տարի է պահանջվել այն վերականգնելու համար:1174 թ. ավարտվել է դասը և տրանսեպտի արևելյան մասերը: Գլխավոր իրանը և արևմտյան ֆասադը ավարտվել է 13-րդ դարի առաջին տարիներին: Այստեղ մեկ հետքրքիր առանձնահատկություն կա, աբսիդը կիսակլորի փոխարեն ուղղանկյուն ավարտ ունի, որը Ֆրանսիայում էլ ոչ մի տեղ չի հանդիպում: Սա եռանավ բազիլիկ է և հատվում է եռանավ տրանսեպտով:

Արևմտյան ֆասադն ունի Ֆրանսիայի վաղ վաղ գոթիկային ոչ հատուկ տեսք: Այն դեռևս հիշեցնում է ռոմանական արվեստը: Սա ևս բաղկացած է երեք շարքից: Առաջին հարկը եռակամար է, որոնք որպես մուտքեր են հանդիսանում: Կամարներն ավարտվում են սրածայր ելուստներով, կամարի վերևում գոյացած եռանկյունու մեջ հարթաքանդակներ են: Երկրորդ հարկի մեջտեղում հսկայական վարդակ է, կողքերում կամարաձև պատուհաններ: Երրորդ հարկն ավելի ցածր է և ներկայացնում է սյուների վրա հենված կամարներ, դրանց վերևում աշտարակներ են: Աշտարակները բաղկացած են մի քանի հարկերիից և զարդարված են կամարաձև որմնախորշերով: Խաչի հատման տեղում ցածր աշտարակ է/կրկին ռոմանական է/: Տրանսեպտի հարավային թևում ևս մեկ աշտարակ է, որի մասին ճարտարապետ Վիլլեր դ՚Օննեկուռը/13-րդ դար/ ասել է ,,Շատ վայրերում եմ ես եղել, բայց ոչ մի տեղ չեմ տեսել այնպիսի աշտարակ, ինչպիսին Լանում է,,: Տաճարի ինտերիերը տիպիկ գոթական է:

ԳՈԹԱԿԱՆ ՈՃ
ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիայում գոթական ոճն ավելի ուշ է հաստատվում, քան Ֆրանսիայում, իհարկե ֆրանսիական վարպետների գեղարվեստական փորձի հիման վրա: Սակայն չնայած դրան, գոթական արվեստը այստեղ ստանում է իր խորը յուրօրինակ և օրիգինալ զարգացումը: Այդ հանգամանքը անկասկած կապված էր Գերմանիայի ֆեոդալական կարգերի ներքին հակասությունների հատուկ բարդության և սրության հետ: Այստեղից էլ գերմանական արվեստին հատուկ դրամատիզմի և էքսպրեսիայի արտահայտությունը, հատկապես քանդակի ասպարեզում: Գերմանական գոթիկայում չկա այն հարաբերական հարմոնիան, որը պարզ զգացվում էր ֆրանսիական վարպետների ստեղծագործություններում: Գերմանական գոթիկայի ինքնատիպությունը կայանում է նրանում, որ այն արտահայտում է մարդու ներքին կյանքի լարվածությունը և արտաքինի հակասությունը; Գերմանական գոթիկային հատուկ է հետաքրքրությունը հոգևոր պոռթկումների պատկերման, սուր զգացմունքայնության, ինչպես նաև գեղարվեստական կերպարի անհատականության հանդեպ:

Գերմանական ճարտարապետական գոթիկան բաժանվում է երեք շրջանների: Գերմանիայի ճարտարապետության զարգացման առանձնահատկություններից մեկը ռոմանական ավանդույթների գիտակցական պահպանումն է; Հետագայում իհարկե կարկասային սիստեմի կիրառումն է, ինչպես նաև միաշտարականի ֆասադները:
Գերմանիայում ստեղծվել են մեծ քանակությամբ կառույցներ, որոնք ռոմանականից գոթականին անցնելու շրջանին են պատկանում: Օրինակ է Լիմբուրգի տաճարը: Այստեղ ճարտարապետական ֆորմաների ընդգծված վերտիկալ ուղղվածությունը վկայում է գոթական տենդենցների մասին:
Հետաքրքրական է նաև Աստվածամոր տաճարը Տրիրում: Սրա կոնստրուկցիայի բնութագրական գիծը հատակագծի կենտրոնական կոմպոզիցիան է: Հավասարաթև խաչը, ծածկված կամարաջղային թաղերով, յուրաքանչյուր կողմերում երկուական կապելլա: Կապելլաների նման տեղաբաշխումը Ֆրանսիային ծանոթ չէր; Այն հանդիսանում է գերմանական վարպետների օրիգինալ ստեղծագործությունը:

ՔՅՈԼՆԻ ՏԱՃԱՐԸ

Քյոլնի տաճարի կառուցումը ընդգրկել է երկու փուլ՝ 1248-1437 թվականները և 1842-1880-ական թվականները[5]: Կառուցումից հետո տաճարը ունեցավ 157 մետր բարձրություն և չորս տարի շարունակ եղել է աշխարհի ամենաբարձր շինությունը: Գերմանիայի ամենաայցելվող տաճարներից մեկն է համարվում: Ամեն օր, միջինացված տվյալներով, այցելում են շուրջ 20000 այցելուներ

Տաճարի ներկայիս տարածքը, ամենայն հավանականությամբ, դեռևս հռոմեական տիրապետության ժամանակ, հանդիսացել է Քյոլնում բնակվող քրիստոնյաների հոգևոր-կրոնական կենտրոնը: Քաղաքի հյուսիսային մասում, հարյուրամյակների ընթացքում, կառուցվել են մի քանի եկեղեցիներ, որոնցից յուրաքանչյուրը նախորդին գերազանցում էր իր չափսերով: Այդ եկեղեցիները գտնվում էին Քյոլնի վանքերի ու մենաստանների օղակում, որը և հանդիսանում էր «սուրբ Քյոլնը»:

Այդ եկեղեցիների մնացորդներն այսօր կարելի է տեսնել Քյոլնի տաճարի ստորին հատվածում, որտեղ կատարվել են հնագիտական ուսումնասիրություններ[7]: Այդ տարածքն ընդգրկում է ավելի քան 4000 քառակուսի կիլոմետր: Ամենահներից շատ քիչ բան է պահպանվել: Հայտնաբերվել են միայն հատակի և պատի որոշ հատվածներ: Գրեթե 500-ական թվականներին կառուցված պարզունակ ավազանի տակ եղել է ութանկյուն մկրտարան, որի վրա կար բալդախին՝ վարագույր՝ գահի վրա: 540 թվականին այստեղ հուղարկավորվել են կին և ութամյա մի տղա: Գերեզմանից հայտնաբերված թանկարժեք իրերը վկայում են, որ մահացածները Մերովինգներ դինաստիայի Տեոդեբերտ I արքայի ընտանիքի անդամներն են:

Արդեն մի քանի տարի անց, նույն վայրում սկսվում է նոր, ավելի մեծ եկեղեցու շինարարությունը: Այդ եկեղեցու սուրբ սեղանի դիմաց դրված էր քարից պատրաստած գահը՝ 5,70 մետր տրամագծով: Միջերկրածովյան ավազանի եկեղեցիներում այդպիսի կառույցները օգտագործվում էին ոչ միայն քարոզներ կարդալու համար, այլև հանդիսավոր արարողակարգեր անկացնելու, օրինակ թագադրում, աստիճանների դասում: 8-րդ դարի վերջին եկեղեցու արևմտյան մասում կառուցվել են օղակաձև երգեցողության պատշգամբներ: Հին տաճարը Քյոլնի ամենամեծ եկեղեցիներից մեկն էր: Այն դարձավ քյոլնյան եպիսկոպոսության նստավայրը: Նրա կենտրոնական նավի լայնությունը հասնում էր 12 մետրի: Նավին կցված էին վեցմետրանոց այլ նավեր՝ կողքերից: Կամարաշարով երեք նավերը կապվում էին միմյանց: Արևելյան և արևմտյան նավերին հարում էին ցածր լայնակի շինություններ, որոնց արևելյան մասում գտնվում էին ոչ մեծ պատշգամբները: Այդ պատշգամբները ավարտվում էին կիսաշրջանաձև խորանով: Արևելյան

պատշգամբները նվիրված էին Մարիամ Աստվածածնին, իսկ արևմտյանները՝ Սուրբ Պետրոսին: Դրանց կողքին կային երկու կլոր աշտարակներ: Որոնց առջև գտնվում էր ընդարձակ ներքին բակը՝ շրջապատված ժամերգության համար նախատեսված կցակառույցներով: Բակի կենտրոնում կար ջրհոր, որի պատերը ցայսօր պահպանվել են տաճարի դիմաց գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիի մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ռոմանական ժամանակաշրջանի արվեստը համաշխարհային արվեստի մեջ մի նոր փուլ էր, որը կատարելագործումն էր հատկապես Բյուզանդական միջնադարյան արվեստի : Ե՛վ Բյուզանդական և՛ ռոմանական արվեստում եկեղեցին մեծ նշանակություն ուներ, սակայն ի տարբերություն բյուզանդականի՝ ռոմանական ժամանակաշրջանում եկեղեցին ավելի սերտորեն կապված էր քաղաքական պայքարի , առօրյա կյանքի հետ:

Ռոմանական արվեստի ամենամեծ առանձնահատկություններից մեկը կայանում էր մեկ ոճի սահմաններում տարբեր որոնումներ փնտրելու հնարավորությունը, քանի որ ի տարբերություն Բյուզանդիայի, որտեղ արվեստի կարգավորիչը հանդիսանում էր մայրաքաղաքային դպրոցը, ռոմանական ոճը չէր բացառում տեղական դպրոցների մեծաթիվությունը և բազմազանությունը: Եվ ինչպես բյուզանդականում, ռոմանական արվեստում նույնպես կերպարները կերտված էին բարձր ոգեշնչվածությամբ, սակայն տարբեր էին դրանց բովանդակությունը և արտահայտման ձևերը: Ռոմանական արվեստը տարածում գտավ ողջ Եվրոպայում : Կարծում եմ, որ ռոմանական արվեստը և հենց բուն ռոմանական ժամանակաշրջանը մեծ հեղաշրջում կատարեցին հետագա արվեստի զարգացման մեջ և մարդիկ սկսեցին ձգտել ոչ թե կատարյալին և արտահայտելուն միայն մարմնականը, այլ սկսեցին մեծ ուշադրություն դարձնել նաև հոգևորին, զգայականին, քանի որ դրանց արտահայտչաձևերը բազմազան էին և արտահայտվում էին յուրովի:

Գոթական ոճը միջնադարի արվեստի ավելի հասուն ոճն է, քան ռոմանականը: Այն զարմացնում է արվեստի բոլոր տեսակներում գեղարվեստական արտահայտությունների իր միասնությամբ ու ամբողջականությամբ: Ձևով՝ կրոնական գոթական արվեստը կյանքի, բնության և մարդու հանդեպ ավելի զգայուն է, քան ռոմանականը: Այն իր մեջ ներառել էր միջնադարյան գիտելիքների, բարդ և հակասական պատկերացումների ու ապրումների ամբողջությունը: Գոթիկայի կերպարների անրջականության և հուզականության մեջ, հոգեկան խոյանքների խանդալից թռիչքում, նրա վարպետների անխոնջ որոնումներում զգացվում է նոր ոգևորություն բանականության և զգացմունքների արթնացում, գեղեցիկի նկատմամբ մոլեգին ձգտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. Մ.Երզնկյան ..Արտասահմանյան արվեստի պատմություն,, Երևան 2003
2. А.И.Пантилеев ,,Шедевры готики,,, Россия 2011
3. Гартман К. О. Стили: в 2-х частях. — М.: Искусство, 2000.
4. Ювалова Е. П. Романский стиль // БСЭ. — 3-е изд. — Т. 22. — М.: Советская энциклопедия,1975.

Հանրագիր

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃ

ՖՐԱՆՍԻԱ

Կլյունի տաճար, Ֆրանսիա, 1088 թ.

Կանի Սուրբ Երրորդության եկեղեցի, Ֆրանսիա, 1059-1066թթ.

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃ

ԳԵՐՄԱՆԻԱ



Գերնրոդեի մենաստանի եկեղեցին, Գերմանիա, 960թ.

ԳՈԹԱԿԱՆ ՈՃ

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզի Աստվածամոր տաճարը, Ֆրանսիա, 1163թ.

Լանի տաճարը Ֆրանսիայում, 1160թ.

ԳՈԹԱԿԱՆ ՈՃ.

ԳԵՐՄԱՆԻԱ

Քյոլնի տաճարը, Գերմանիա, 1248թ.